ԿԱՏԱՐՅԱԼ ԱՆՁԸ ՀԱԿՈԲ ԳՅՈՒՐՋՅԱՆԻ ԱՐՎԵՍՏՈՒՄ

Վարդանյան Ս. (ԵՊՀ, Հայաստան)
sate08@rambler.ru

Բանալի բառեր՝ XX դարի կերպարվեստ, Քրիստոս, ազգային ընկալում:

Հիսուս Քրիստոսին յուրաքանչյուր մշակույթ, ամեն ազգ ու անհատ պատկերել է յուրովի: Այդ պատկերներն արտահայտում են տվյալ ժամանակաշրջանի բարոյահոգեբանական նկարագիրը, ինչպես նաև գեղագիտական ընկալումների համակարգում գոյություն ունեցող ձևի ու բովանդակության հատկությունները: Քրիստոսի կերպարը, կրելով մշակութային ավանդություն ու հանդիսանալով իդեալական անձի, անհատի մարմնավորում, իր բոլոր բացարձակ էություններով (սուբստանցիաներով)՝ իմաստությամբ, կամքով և սիրով, կարող է դառնալ մեր օրերում ապրող հայ մարդու կատարյալին հասնելու խորհրդանիշ: Հիսուսի կերպարի ընկալման և արտահայտման միջոցով հնարավոր է բացահայտել մեր ազգային էության, մտածելակերպի տարբեր կողմերը, նաև այլ մշակույթների ազդեցություններն ու նկարիչների անհատական մոտեցումները:

Հակոբ Գյուրջյանի (1881-1948) «Քրիստոսի գլուխը» քանդակը (մոտ 1914 թ., 97x43x51,5, կրաքար, ՀԱՊ) որպես նոր մոտեցում կերպարին, քանդակային արվեստի արտասովոր, նախադեպը չունեցող ստեղծագործություն է: Շուշիում ծնված քանդակագործը, ապրելով և ուսանելով Փարիզում, յուրացրել էր ժամանակի գեղարվեստական բոլոր դպրոցները և առաջադեմ միտումները, հասցրել էր այցելել նաև Ռոդենի արվեստանոցը: Թե՛ հայկական, թե՛ կաթոլիկ եկեղեցուց կտրված այս քանդակն ստեղծված էր առանձին կերպար արտահայտելու, ժամանակակից քանդակագործության մեջ՝ դիմապատկերի առավել ուժեղ, արտահայտիչ կերպար ներկայացնելու միտումով: Գյուրջյանը

Քրիստոսի քանդակում համարձակորեն գնացել է հատուկ մարդկային տիպի և անսովոր ներքին ապրումի հաղորդմանը: Դրա հետ մեկտեղ ենթադրում ենք, որ հեղինակն օգտագործել է իր ընկերներից մեկի՝ Օննիկ Ղարիբյանի դիմագծերը: Իր ժամանակի շունչն զգացած քանդակագործը կերպավորել է երկարատև խոշտանգումների ենթարկված մարդու, անհատի, «մերժված հոգու», իր դարի «թանձրացած հուսահատության և հոռետեսության տրամադրությունները»: Միաժամանակ նա ներկայացրել է կերպարվեստի առաջ դրված նոր խնդիրներ. քանդակագործության միջավայրում այդքան արդիական մոնումենտալիզմի և դեկորատիվիզմի ակնհայտ ներգործությունը:

THE ABSOLUTE PERSONALITY IN HAKOB GYURJIAN'S ART

Vardanyan S. (Yerevan State University, Armenia)